

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ 6-րդ ԴԱՍԱՐԱՆ
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈԻԼ - 2021 թ.

Տևողությունը – 150 րոպե

1. Գտնել 17-ի երկնիշ բազմապատիկների քանակը:

- 1) 3 2) 4 3) 5 4) 6

2. Ճանապարհի n ր տոկոսն է անցել մեքենան, եթե մնացել է անցնելու $\frac{2}{5}$ մասը:

- 1) 30 2) 40 3) 50 4) 60

3. Հաշվել 2-ից փոքր և 3 հայտարարով բոլոր անկանոն կոտորակների գումարը:

- 1) 4 2) 3 3) 2 4) 1

4. Քանի՞ անգամ է 28-ի բոլոր բաժանարարների գումարը մեծ 28-ից:

- 1) 1 2) $\frac{3}{2}$ 3) 2 4) այլ պատասխան

5. Հաշվել արտահայտության արժեք. $2021 - 2020 + 2019 - 2018 + \dots + 5 - 4 + 3 - 2 + 1$

- 1) 1010 2) 1011 3) 1012 4) այլ պատասխան

6. Օպերատորը օրական 6 ժամ աշխատելով, 3 օրում կարող է 45 էջ մուտքագրել: Նա օրական քանի՞ ժամ պետք է աշխատի, որ 8 օրում 160 էջ մուտքագրի:

- 1) 6 2) 7 3) 10 4) 8

7. Եթե մտապահված թվի եռապատիկին գումարենք 4 և ստացված թիվը բաժանենք 7-ի, ապա կստանանք 13: Գտնել մտապահված թվի թվանշանների գումարը:

- 1) 11 2) 9 3) 13 4) 10

8. Գրատախտակին մի տողում գրված է 32 հատ 1 թվանշանը: Քանի՞ հատ “+” նշան պետք է դնել նրանց միջև, որ գումարը ստացվի 2021:

- 1) 9 2) 10 3) 11 4) այլ պատասխան

9. 5 գրիչի և 4 մատիտի համար վճարեցին 610 դրամ, իսկ նույնպիսի 2 գրիչի և 2 մատիտի համար 260 դրամ: Քանի՞ դրամ պետք է վճարել 6 գրիչի և 5 մատիտի համար:

- 1) 660 2) 700 3) 780 4) 740

10. Վեց երեխա հանդիպեցին և բոլորը միմյանց ողջունեցին ձեռքսեղմումով: Ընդամենը քանի՞ ձեռքսեղմում եղավ:

- 1) 15 2) 12 3) 30 4) 36

11. 4, 6, 10, 18, 34, ..., ..., թվերը գրված են որոշակի օրինաչափությամբ: Գտնել 34-ից հետո գրված հաջորդ երկու թվերի գումարը:

- 1) 184 2) 190 3) 196 4) այլ պատասխան

12. 9 քարտերի վրա գրված են 1-ից մինչև 9-ը թվերը՝ յուրաքանչյուրի վրա մեկ թիվ: Ամենաշատը այդ քարտերից քանի՞ սը կարելի է դասավորել կողք-կողքի այնպես, որ հարևան քարտերի վրա գրված թվերից մեկը բաժանվի մյուսին (օրինակ՝ 3, 6, 2,....):

- 1) 9 2) 8 3) 6 4) այլ պատասխան

13. Արկղում կա 2 դեղին, 8 կարմիր, 9 կանաչ և 10 կապույտ գնդակներ: Առանց արկղի մեջ նայելու ամենաքիչը քանի՞ գնդակ պետք է հանել արկղից, որ նրանց մեջ լինի որևէ երկու գույնից գոնե 3-ական գնդակ:

- 1) 17 2) 13 3) 6 4) այլ պատասխան

14. Անին համարակալեց մաթեմատիկայի տետրի էջերը՝ օգտագործելով 252 թվանշան: Քանի՞ թերթ ունի Անիի տետրը:

- 1) 96 2) 120 3) 60 4) այլ պատասխան

15. Գտնել այն բնական թվերի քանակը, որոնք 2-ով բազմապատկելիս ստացվում է երկնիշ թիվ, իսկ 3-ով բազմապատկելիս եռանիշ թիվ:

- 1) 13 2) 14 3) 15 4) 16

16. Էլեկտրոնային ժամացույցը ցույց է տալիս ժամը և րոպեն (օրինակ 02 : 17): Օրվա մեջ քանի՞ րոպե կա, որոնց ընթացքում ժամացույցի ցույց տված թվի թվանշաններից գոնե մեկը 7 է:

17. Երեք թվերի գումարը առաջին թվից մեծ է 30-ով, երկրորդից՝ 38-ով, երրորդից՝ 46-ով: Գտեք այդ թվերի գումարը:

18. Իրարից տարբեր և հորիզոնական շերտերից կազմված քանի՞ եռագույն դրոշ կարելի է կարել 4 տարբեր գույնի կտորներից:

19. Արամը գումարեց ընթացիք շաբաթվա բոլոր 5 աշխատանքային օրերի ամսաթվերը և ստացավ 67: Ի՞նչ կստանար Արամը, եթե գումարեր այդ շաբաթվա շաբաթ և կիրակի օրերի ամսաթվերը:

20. Դավիթը գրատախտակին գրված թիվը փոխում է հետևյալ կերպ. եթե թիվը բաժանվում է 3-ի՝ թվից հանում է 1, եթե 3-ի բաժանելիս մնացորդում 1 է ստացվում՝ թվին գումարում է 2, իսկ եթե 3-ի բաժանելիս մնացորդում 2 է ստացվում՝ թվից հանում է 2: Գրատախտակին գրված է 100 թիվը: Ո՞ր թիվը կստանա Դավիթը 16 քայլից հետո: